ԱՐՄԱՎԻՐԻ ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ ՏԱՐԱՏԵՍԱԿ

ԻՆԵՍԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1967 և 1969 թթ. Արմավիրի պեղումների ժամանակ գտնվեցին խեցեղենի երկու ինքնատիպ նմուշներ, որոնք Հայկական ՍՍՀ հնավայրերից հայտնաբերված խեցեղենի մեջ առայժմ իրենց զուգահեռները չունեն։

Հիշյալ առարկաներից (արտաքին ձևերից ելնելով համարում ենք կափարիչներ) առաջինը (նկ. I, գծ. 1) գտնվել է Արմավիրի երրորդ տեղամասի 12 i քառակուսում պեղվող ուրարտական մեծ շենքի պատի 0,9 սմ խորությունից։ Այն ունի հատած կոնի ձև, գագաթին չորս մասի ճյուղավորված ելուստ-բռնակով, որը իրանից առանձնանում է գծիկներով զարդարված ուռուցիկ գոտիով։ Կափարիչի (բարձրությունը՝ 9 սմ, հիմքի տրամագիծը՝ 12 սմ) իրանը, որի վրա բացված են 5 ուղղանկյուն անցքեր, դեպի ներքև լայնանալով ավարտվում է ետ թեքված, ներսի կողմից հարթ, լայն եզրաշուրթերով։ Երկրորդ նմուշը (նկ. II, գծ. 2) գտնվել է նույն տեղամասի մուտքի պարսպապատի հիմքերի մոտ՝ 8 c—b քառակուսիների միջև։ Սա նույնպես ունի հատած կոնի ձև, գագաթին դրված է թռչնակերպ բռնակ, որի հարթաքանդակ, մագիլավոր ոտքերը իջնում են կափարիչի իրանի վրա։ Իրանը բաժանված է գոտիների։ Վերին գոտում կան չորս եռանկյունաձև անցքեր, երկրորդում պատկերված են 7 եղջերուներ, որոնցից 4-ը մեծ և ճյուղավորված եղջյուրներով են, իսկ 3-ը՝ ավելի փոքր։ Կափարիչի (բարձրությունը՝ 10 սմ, հիմքի տրամագիծը՝ 9 սմ) իրանի ցածի մասը եզրափակում է երկու զուգահեռների մեջ կանոնավոր պարփակված եռանկյունաձև զարդագոտին։ Բոլոր զարդապատկերներն, ինչպես նաև բռնակ-թռչնի թևերը խորհրդանշող գծերը, արված են փորագրման եղանակով և ընդելուզված սպիտակ կրաքարի շաղախով, որը կափարիչի սևափայլ, տեղ-տեղ գորշավուն իրանին տալիս է առանձնահատուկ արտահայտչականություն։

Կափարիչները պատրաստված են ավազի որոշակի խառնուրդ ունեցող, լավ հունցված տեղական կավից։ Թրծելու հետևանքով դրանցից առաջինը ստացել է բաց շագանակագույն, իսկ երկրորդը՝ գորշավուն երանգավորում։ Երկուսն էլ թրծված են հավասարաչափ։ Արտաքին մակերեսները լավ փայլեցված են, որի հետքերը պարզորոշ երևում են նույնիսկ երկրորդ կափարիչի սևագորշավուն մակերեսի վրա։

Կափարիչների կավի և արտաքին մշակման քննությունից կարելի է եզրակացնել, որ վերջիններս տեղական խեցեգործության արգասիք են։ Մյուս կողմից, նրանց ձևերի տարբերությունները սովորական կափարիչներից՝ արտաքինի խնամքով հարդարումն ու գեղարվեստական ձևավորումը, ինչպես նաև ստորև բերվող զուգահեռ նյութերը հուշում են, որ դրանք ունեցել են ծիսական կիրառություն։

Կափարիչների հայտնաբերման շերտագրական իրավիճակը որոշակի չէ։ Առաջինը դանվել է ուրարտական և հին հայկական, իսկ երկրորդը՝ հին հայկական և միջնադարյան խառը նյութերի մեջ, թեև վերջիններիս հետ դրանք ո՛չ պատրաստման տեխնիկայով, ո՛չ էլ ձևի առումով որևէ կապ չունեն։ Չնայած ուշ ուրարտական խեցեղենի հետ արտաքին մշակման իմաստով ունեցած որոշ ընդհանրություններին, հնարավոր չէ դրանք այդ շրջանի ուրարտական խեցեգործության հետ կապել, քանի որ առայժմ ուրարտական և ոչ մի հուշարձանի նյութերի մեջ չեն հայտնաբերվել նույնատիպ առարկաներ։

Այսպիսով, հիշյալ կափարիչները կապվում են հին հայկական ժամանակաշրջանի նյութերի հետ, կազմելով նրա օրգանական մասը։ Սակայն հիշյալ կափարիչներն իրենց զուգահեռներն ունեն անտիկ աշխարհի, հատկապես հյուսիս-մերձևսեծովյան հուշարձանների (Օլվիա, Բերեզան, Մարիցինո) նյութերի մեջ։ Մեծ մասամբ դամբարաններից հայտնաբերված այդ կափարիչները ևս կոնաձև են, ունեն գնդիկավոր կամ երկար ելուստաձև բռնակներ և կլոր կամ եռանկյուն անցքեր[1]։ Եթե անգամ նկատի ունենանք պաշտամունքային-ծիսական կիրառություն ունեցող իրերի երկարակեցության հանգամանքը, ապա երկրորդ կափարիչը, չնայած առաջին հայացքից թվացող իր արխաիկ տեսքին (սև փայլեցում, ընդելուզված փորագիր պատկերներ), որը հիշեցնում է լճաշենյան ու արթիկյան խեցեղենի նմուշները, չի հակասում մեր ենթադրությանը, քանի որ այժմ պարզվել է, որ Արմավիրում և մյուս հին հայկական հուշարձաններում (Բերդ, Աստղիբլուր, Նորաշեն, Գառնի, Արտաշատ) բաց և կարմրավուն խեցեղենի կողքին եղել է հնից եկող սև-գորշավուն խեցեղեն (Արմավիր 1968/16, 78, 1969/41, 44, 1971/70, 1972/86 և այլն)։ Այս խեցեղենի մի քանի նմուշներ իրենց կատարման, հարդարման ոճով նման են քննվող կափարիչին։ Դրանցից հատկապես նշենք մ. թ. ա. V—IV դդ. թվագրվող, խոյի գլխով զարդարված, քրեղանատիպ, ծորակավոր անոթը[2], որի ողջ իրանը ծածկված է փորագիր հորիզոնական գոտիով և նրանից ցած իջնող, իրար ներգծված եռանկյունիներով։ Նկատենք, որ երկու տարատեսակ խեցեղենների միաժամանակյա հարևանության փաստը միայն Հայաստանին բնորոշ երևույթ չէ։ Այն դիտվում է նաև հարևան երկրների հիշյալ դարերով թվագրվող հուշարձանների համալիրներում՝ Բեշտաշեն, Մինգեչաուր, Կարա-թեփե, Պասարգադ, Հասանլու, Շոշի աքեմենյան բնակավայր, Միդասի քաղաք և այլն[3]։

---

[1] Б. В. Фармаковский, Раскопки в Ольвии 1902—1903 года («Известия Археологической Комиссии», вып. 13, 1906 г., стр. 127, 1437). К. И. Зайцева, Местная керамика Ольвии эллинистического времени («Труды Эрмитажа», 1962 г., т. 7, стр. 128–263).

[2] Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 169, նկ. 12։

[3] С. М. Казиев, Археологические раскопки в Мингечауре («Материальная культура Азербайджана», т. I, Баку, 1949 г., стр. 29, рис. 24. 26, 28). О. Ш. Исимзаде, Раскопки холма Кара-тепе, «Материалы и исследования по археологии СССР», стр. 125, рис. 18, 19. Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, т. I, 1941, стр. 41. R. Ghirshman, Village Perse-Achemenide. Paris, 1954. pl. XXIV, XXVII. Tresors de L' Ancien Iran, Geneve, 1966. fig. 43, 64, 66. T. Cuyler Young. A comparative ceramic chronology for western Iran,1500—500 B. C. „Journal of Persian studies" № 6, p. 55. Haspels C. Emilie, La cite de Midas. Phrygie III, Paris. 1951. pl. 27.

Երկրորդ կափարիչի զարդագոտին ևս օգնում է կոնկրետացնելու նրանց թվագրումը։ Եղջերուների և ընդհանրապես այծերի ընտանիքին պատկանող կենդանիների պատկերումը լայնորեն տարածված էր Հայաստանի կիրառական արվեստում։ Նրանց պատկերներին մենք հանդիպում ենք անոթների, մանյակների, ապարանջանների, գոտիների, շքասեղների վրա, փոկ պատկերման ավանդույթը գալիս է բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններից՝ հարատևելով մինչև միջնադար։ Նկարագրվող կափարիչի զարդագոտու մոտակա զուգահեռներ գտնում ենք մ. թ. ա. V—III դդ. մինգեչաուրյան գորշա-

Նկ. I և II. Խնկարկման անոթի կափարիչներ։

վուն խեցեղենի նմուշների, Արդեբիլում հայտնաբերված նույն ժամանակաշրջանին վերագրվող ծորակավոր անոթի (որի սևագորշավուն մակերեսի վրա պատկերված է իրար հաջորդող 6 եղջերուների նույնատիպ շարան) և Արմավիրում 1968 թ. գտնված անոթի մի բեկորի վրա[4]։ Եվ, վերջապես, նույնաձև փորագիր և ոճական ընդհանրություն ունեցող այծեր են պատկերված Աթարբեկյանում գտնված և Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող (ինվ. 1903/3) գեմմաների վրա, որոնք ևս թվագրվում են մ. թ. ա. V—IV դարերով[5]։

Այսպիսով, հիշյալ կափարիչներն իրենց տիպաբանական, տեխնիկական տվյալներով և զուգահեռ նյութերով թվագրվում են V—IV դարերով։

Անտիկ և հելլենիստական հուշարձաններից հայտնի կափարիչները դրվում էին ոչ մեծ կրատերների, կանֆարների կամ անֆորաների տիպի անոթ-

---

[4] „Tresors de L' Ancien Iran", Geneve, 1966, рис. 38. Б. Н. Аракелян, *նշվ. աշխ., տախտակ* IV:

[5] А. О. Миацаканян, Раскопки могильников в селении Атарбекян в Арм. ССР («Краткие сообщения Института истории материальной культуры», 60, 1955, стр. 35, рис. 2, 3, 9).

ների վրա (բարձրություն՝ 16—20 սմ): Նրանց մեջ ածխի կամ շիկացած խճաքարերի վրա լցվում էին բուրավետ խոտեր, հատիկներ կամ խեժեր, որոնց այրվելուց առաջացած բուրմունքը տարածվում էր կափարիչի անցքերից[6]։



Նկ. III. Խնկարկման անոթների կափարիչների գծանկարներ։

Մինչև այժմ Արմավիրում և հին հայկական ժամանակաշրջանի մյուս հուշարձաններում խնկարկման անոթներ չեն հայտնաբերվել։ Սակայն հայտնի են ուրարտական խնկարկման անոթները, որոնց մի տեսակը հիմնական ուրվագծով

[6] К. И. Зайцева, ук. соч., стр. 196, рис. 1, 6, 15.

նման է անտիկ անոթներին։ Դրանք 15—28 սմ բարձրությամբ, գլանաձև ոտքով, գավաթանման անոթներ են (КБ 50—15, 53, 58, 2129/149, 2207/67 և այլն) և կողերին ունեն ուղղահայաց կամ շրջանակաձև անցքեր։ Լեմման-Հաուպտը և Բ. Բ. Պիոտրովսկին այս անոթներին վերագրում են ոչ միայն ուտիլիտար (գինու կարասների ծծմբահարում), այլև պաշտամունքային կիրառություն։ Այս ենթադրության օգտին է խոսում Կարմիր բլուրի մառաններից մեկի կենտրոնական մասում տեղադրված կավե զոհասեղանի առկայությունը, որի մոտ գտնվել են աստվածների արձանիկներ և նշված խնկարկման անոթները[7]։ Արմավիրում ևս հայտնաբերվել են այսպիսի սկահակատիպ անոթների ոտքեր 5,5 սմ — 12սմ բարձրությամբ (Արմ. 1966/136, 1967/19 և տոքից իրանին անցման (Արմ. 1968/78) բեկորներ (նկ. III, գծ. 3), որոնք ուրարտականների նման սնամեջ են, դեղնաշագանակագույն, լավ փայլեցրած մակերեսով և շատ նման առաջին կափարիչի մշակմանը։ Կանգնեցնելու հարմար լինելու նպատակով նրանց եզրերը փռված են դեպի դուրս և, ի տարբերություն ուրարտականների, այս անոթները ձգված են ու ավելի նման անտիկ խեցեղենին։ Դժվար է ասել, թե սրանց վերին մասերը ևս կրկնո՞ւմ են ուրարտական խնկամանների պսակների ձևը, թե՞ ոչ, բայց դրանք եզակի չեն կարող լինել, քանի որ այժմ հայտնի են հին հայկական խեցեղենի շատ նըմուշներ, որոնք ուրարտական տիպերի հետագա զարգացած ձևերն են։ Հնարավոր է, որ ուրարտական խնկարկման անոթներն էլ բրոնզեդարյան դամբարաններից գտնված (ըստ երևույթին թաղման որոշակի արարողության հետ կապված) սկահակատիպ անոթների հետագա զարգացած ձևերը լինեն։ Այսպիսի ենթադրության հիմք են տալիս Մրդպին ձորի դամբարաններից Երվանդ Լալայանի հայտնաբերած սկահակատիպ անոթները և կափարիչանման մի իր։ Լալայանը այս մասին գրում է. «Այդ խնկանոցը դրվում էր կրակին, մեջը լցվում էր խունկ և կափարիչով ծածկվում, որը շատ նման է այժմ էլ մեր գյուղերում օգտագործվող խնկանոցներին։ Անուշահոտ ծուխը դուրս էր գալիս կափարիչի վրայի անցքերից»[8]։ Ի դեպ, այդ տեսակետից հետաքրքիր նմուշ է Դվինի հեթանոսական տաճարի զոհասեղանի կենտրոնում դրված խունկ ծխելու սկահակատիպ անոթը (2292 /75/[9], որն ընդհանուր կառուցվածքով որոշ առնչություն ունի թե՛ ուրարտական, թե՛ հին հայկական խեցեղենի հետ։

Հին աշխարհում լայնորեն օգտագործում էին տարբեր նյութերից ու մետաղներից պատրաստված խնկարկման անոթներ, որոնք, որպես պաշտամունքային նշանակություն ունեցող և թանկարժեք իրեր, նվիրվում էին աստվածներին ու տաճարներին։ Այս մասին տեղեկություններ պահպանվել են արձանագրություններում և անտիկ պատմիչների մոտ[10], սակայն Հայաստա-

---

[7] Lehman-Haupt, Armenien einst und jetzt, հ. II, էջ 567, Б. Б. Пиотровский, Кармир блур, т. I, Ереван, 1952, стр. 23, рис. 8, стр. 34, рис. 17.

[8] Եր. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 80, նկ. 92, 93։

[9] Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնադարյան հեթանոսական մեհյանի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 55)։

[10] Th. Hommolle, Inventaries des temples Deliens en l' annee 364, BCH. X, Paris, 1886, p. 463; Геродот, IV, стр. 377.

նի հին հայկական կամ հելլենիստական հնավայրերից այդպիսիք դեռևս չեն հայտնաբերվել։ Թեև այդ անոթներն օգտագործվել են հիմնականում աստվածներին խնկարկելու համար, սակայն չի բացառված նաև նրանց կիրառությունը կենցաղում՝ շենքերի օդը մաքրելու, ախտահանելու կամ բուրավետ դարձնելու համար, ուստի հնարավոր է, որ նշված կափարիչները դրվելիս են եղել սովորական անոթների, թասերի ու ճրագների վրա, որոնք բեկորային կամ ամբողջական վիճակում առատորեն գտնվում են Արմավիրում և մյուս հնավայրերում։ Այս առումով հետաքրքիր նմուշ է Վրացական ՍՍՀ Վանի ավանի մոտ գտնվող հնավայրի, մ. թ. ա. II դարով թվագրվող տաճարային շենքում հայտնաբերված, հարթ նստուկով, կլոր կողերով, երկաթե թասաձև խնկամանը, որի կոնաձև կափարիչն ունի բազմաթիվ եռանկյունաձև անցքեր [11]։ Եթե նույնիսկ ընդունենք, որ հին հայկական խեցեգործությանը անծանոթ էր անտիկ աշխարհում այնքան տարածված խնկարկման անոթի հատուկ ձևը, ապա դա չի բացառում խնդրո առարկա կափարիչների ֆունկցիոնալ նշանակությունը, քանի որ խունկ ծխելու, խնկարկելու սովորությունը Հայաստանում տարածված է եղել հնագույն ժամանակներից։ Հետևաբար, ուրարտական և անտիկ ժամանակաշրջանների Հայաստանի խոշոր կրոնական կենտրոն Արմավիրի տաճարներում չէին կարող չօգտագործվել խնկարկման անոթներ։ Հենց հունական „θυματήρια“ և հայկական «խնկարկման անոթ» բառերն էլ հուշում են դրանց օգտագործման նպատակը։ Միջերկրածովյան երկրների 180 տեսակի խնկիներից (Cistaecas) երկու տասնյակից ավելին հայտնի էին Հայաստանում՝ մարեմա, հոռմի, սպիտակ, կարմիր, կնտրուկ, մուշկ և այլն։

Այսպիսով, Արմավիրի պեղումներից հայտնաբերված հիշյալ երկու իրերը խնկարկման անոթների կափարիչներ են, որոնք հին հայկական խեցեգործությունը մի նոր տեսակով լրացնելուց բացի, ընդարձակում են մեր պատկերացումները հին հայկական կենցաղի, ծեսերի և մշակույթի մասին։

НОВЫЙ ТИП КЕРАМИКИ ИЗ АРМАВИРА

ИНЕССА КАРАПЕТЯН

Резюме

Во время раскопок Армавира в 1967 и 1969 гг. были найдены керамические предметы, впервые встречающиеся на территории Армении и представляющие собой совершенно новую форму. Они определяются как крышки курильниц, имеют форму усеченного конуса и украшены рельефным и другим орнаментом. Изучение глины, а также отделки позволяют считать их предметами местного производства.

Археологический слой, в котором они найдены, их общий облик, характер орнамента, а также аналогии с керамикой из других античных центров позволяют датировать крышки V—III вв. до н. э.

---

[11] «Вани», т. I, Тбилиси, 1972, стр. 70, таб. 129.